ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

N 387-Ա

„25" նոյեմբեր 2024թ.

ք.Արտաշատ

ՎԻՐԱԲ ՎՈՎԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ «ԳԵՏԱԶԱՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 85-րդ կետով, հիմք ընդունելով 2024 թվականի նոյեմբերի 21-ի Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող «Գետազատի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի թիվ 3 որոշումը և Վիրաբ Վովիկի Հարությունյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1" Վիրաբ Վովիկի Հարությունյանին 2024 թվականի նոյեմբերի 25-ից ազատել «Գետազատի առողջության առաջնային պահպանման կենտրոն » պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի պարտականություններից և լուծել նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. 2024 թվականի նոյեմբերի 25-ից Վիրաբ Վովիկի Հարությունյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ

գործող «Գետազատի առողջության առաջնային պահպանման կենտրոն » պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

25.11.2024

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 **Ս. ԹԵՎՈՆՅԱՆ**